ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
🖷 (374 11) 818 506

№ 5/06.2/51800
«12» «09» 2018 թ.

«Տուրբոլայն» ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Գասպարյանին
ք.Երևան, Շիրազի 39/1

Հարգելի պարոն Գասպարյան

Բնապահպանության նախարարության և «Տուրբոլայն» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունն ստանձնել է 1017000 (մեկ միլիոն տասնյոթ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով տրանսպորտային նյութերի (այսուհետ՝ ապրանք) մատակարարման պարտավորություն, ինչի համար կատարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: Մինչև 2018 թվականի սեպտեմբերի 12-ը չմատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմում է 711 000 (յոթ հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ, իսկ ապրանքների մատակարարման ժամկետը խախտվել է 73 (յոթանասուներեք) օր:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ բնապահպանության նախարարությունը 2018 թվականի սեպտեմբերի 12-ից միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման հետևանքով, համաձայն պայմանագրի 6.2 կետի, հաշվարկված տույժը կազմում են 25 951 (քսանհինգ հազար ինը հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ (711000 x 0.05% x 73օր):

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի

18-րդ ենթակետի «դ» կետով, ինչպես նաև հաշվի առնելով Ձեր ընկերության կողմից 2018 թվականի մայիսի 4-ին միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությունը՝ պայմանագրի կատարման ապահովման տուժանքը Պայմանագրի միայն չկատարված մասով կազմում է 71 100 (յոթանասունմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ:

Առաջարկում եմ՝ հաշվարկված ընդհանուր տույժերը, ինչը կազմում է 97 051 (իննսունյոթ հազար հիսունմեկ) դրամ, սույն ծանուցումն ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում փոխանցել ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության 900011018679 հաշվեհամարին և բնապահպանության նախարարություն ներկայացնել վճարման անդորրագիրը:

Հարգանքով՝ Հ. Հովհաննիսյան

Ֆինանսատնտեսական վարչության
Բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լ.Զոհրաբյան 011 818 514